ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 11.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի գիտխորհրդի

12-ը հուլիսի 2019թ.

Նախագահ՝ Մ. Ա. Զաքարյան

Քարտուղար՝ Հ. Ս. Գասպարյան

Ներկա էին խորհրդի 15անդամներից 11-ը:

ՕՐԱԿԱՐԳ

1. *ՈՒսումնական տարվա ամփոփում:*
   /զեկ. Մ. Ա. Զաքարյան /
2. *Այլ հարցեր:*

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի պաշտոնակատար, գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Նա ներկայացրեց 2018-2019 ուստարվա II կիսամյակի քննաշրջանի արդյունքները. քննաշրջանը անցել է համաձայն ժամանակացույցի: Առաջադիմությունը համեմատած նցած տարվա նույն ժամանակահատվածի հետ ցածր է /առաջադիմությունը կցվում է արձանագրության տեքստին/: Այն մեծի մասամբ կախված է ԻԿՄ I կուրսի շատ ցածր առաջադիմությամբ:

Այնուհետև զեկուցող գիտխորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը ներկայացրեց ուսումնական տարվա կրթական գործունեության ինքնավերլուծությունը: Նա մանրամասնեց ուսումնական գործընթացի պահանջների հիման վրա կատարված աշխատանքները, որը համաձայն ժամանակացույցի իրականացվել են բոլոր պահանջները. դասաժամերի բացթողում չի գրանցվել, պատշաճ ձևով կազմակերպվել և անց է կացվել քննաշրջանը: Իր գոհունակությունը հայտնեց

ավարտական կուրսերի հետ իրականացված ավարտական աշխատանքների պաշտպանության մասին: Աշխատանքների կատարումը և վերահսկողությունը իրականցվել է ֆակուլտետի դեկանատի և ամբիոնների համատեղ աշխատանքի շնորհիվ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Ք. Վ. Օթարյանը, Կ. Հ. Հովսեփյանը և ուրիշներ: Նրանք ևս ներկայացրին, որ ուսումնական տարին անցել է ուսումնական գործընթացի պահանջներին համապատասխան:

ՈՐՈՇԵՑԻՆ-2018-19ուստարվա ֆակուլտետի կատարած աշխատանքը գնահատել բավարար:

Օրակարգի երկրորդ հարցի մասին Մ. Ա. Զաքարյանը ներկայացրեց, ֆակուլտետային տարեվերջյան գործընթացի մասին:

Մ. Ա. Զաքարյանը ներկայացրեց, որ գերմանական համագործակցության ծրագրի շրջանակներում մեկնելու է Գերմանիայի Բրանդերբուրգյան համալսարան՝ վեց ամիս ժամանակով՝ համատեղ գիտական հետազոտություններ անցկացնելու համար /AvH՝ Ալեքսանդր ֆոն Ֆումբոլդ հիմնադրամի հովանավորությամբ/:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ-Նիստի մասնակիցները բարձր գնահատեցին դեկանի պաշտոնակատար Մ. Ա. Զաքարյանի մասնակցությունը վերոնշյալ ծրագրին, որի ավանդը կբարձրացնի մասնաճյուղի միջազգային հեղինակությունը:

ՈՐՈՇԵՑԻՆ-1. Ներկայացնել և միջնորդել տնօրենությանը հաստատել գիտխորհրդի որոշումը և ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Մ. Ա. Զաքարյանին տրամադրել հինգամսյա չվճարվող արձակուրդ՝ 23.08.2019-31.01.2020թ.ժամկետով:

2. Ներկայացնել և միջնորդել տնօրենությանը Մ. Ա. Զաքարյանի փոխարեն դեկանի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության ամբիոնի ֆ.մ.գ.թ. դոցենտ Կ. Հ. Հովսեփյանին:

ՆԱԽԱԳԱՀ **Մ. Ա. ԶԱՔԱՐՅԱՆ**

ՔԱՐՏՈՒՂԱՐ **Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ**